ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ

28 հունիսի 2022 թվական թիվ 115-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՑԻԿ ԳՅՈՒՂԻ ԲՆԱԿԻՉ ԹԱՄԱՐԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆԻՆ ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի դրույթով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի գրությունը և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության 8-րդ դասարանի աշակերտուհի Թամարա Հովհաննեսի Նահապետյանը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի նախաձեռնությամբ 2022 թվականի մայիս ամսին անցկացված «Հայաստան ասելիս...» թեմայով շարադրությունների մրցույթում հաղթող է ճանաչվել և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի կողմից պարգևատրվել է պատվոգրով, ինչպես նաև գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի և ռուսաց լեզվի ու գրականության ուսուցիչների հայկական ասոցիացիայի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի, Լոռու ու Տավուշի մարզերի հանրակրթական ուսումնական հաստատությունների 4-ից 12-րդ դասարանների աշակերտների միջև կազմակերպված մրցույթ-փառատոնին «Ասմունք» անվանակարգում զբաղեցրել է առաջին տեղը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2022 թվականի վարչական բյուջեի 10-րդ բաժնի 7-րդ խմբի 1-ին դասի «Այլ նպաստներ բյուջեից» 4729 հոդվածից Թամարա Հովհաննեսի Նահապետյանին տրամադրել պարգևավճար ընդամենը 30.000/երեսուն հազար/ դրամ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ -20 Դեմ -0 Ձեռնպահ -0

Ա. ԱՅՎԱԶՅԱՆ

Ֆ. ԱՆՏՈՆՅԱՆ

Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ. ԱՐՇԱԿՅԱՆ

Վ. ԱՐՇԱԿՅԱՆ

Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ա. ԴՐՄԵՅԱՆ

Շ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Ա. ԻԳԻԹՅԱՆ

Ս. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մ. ՄԱԹՈՍՅԱՆ

Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Մ. ՄՆԱՑՅԱՆ

Ն. ՄՈՒՇԵՂՅԱՆ

Ա. ՄՔՈՅԱՆ

Հ. ՆԱՎՈՅԱՆ

Կ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Թ. ՍՈՒՎԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ԻԳԻԹՅԱՆ**

28 հունիսի 2022 թվական
գյուղ Ախուրյան